

Ապառիկ առևտրի սպառողական վարկերի տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը

Տարեկան փաստացի տոկոսադրույքի բանաձևի հաշվարկման բացատրություններ

Բանկը իր կողմից տրամադրած վարկի դիմաց հաշվարկում է տարեկան փաստացի տոկոսադրույք (Annual Percentage Rate կամ APR)՝ սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախս՝ արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով և հաշվարկված՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

- **i** – տարեկան փաստացի տոկոսադրույք,
- **A** – վարկի սկզբնական գումար,
- **n** – վարկի մարմանն ուղղված վճարի թիվ,
- **N** – վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվ,
- **K_n** – վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումար,
- **D_n** – վարկի տրամադրման օրվանից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատված՝ արտահայտված օրերի թվով:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ

Ենթադրենք բանկը ապառիկ ապրանք ձեռք բերելու նպատակով սպառողին տրամադրում է վարկ հետևյալ պայմաններով՝

- Վարկի գումար – 500,000 ՀՀ դրամ,
- Անվանական տարեկան տոկոսադրույքը – 24 %,
- Վարկի մարման ժամկետը – 24 ամիս,
- Վարկի մարման եղանակը – անուիտետային* (հավասարաչափ ամսական մարում, որի մեջ փոփոխական մասերով մտնում են մայր գումարը և կուտակված տոկոսները),

Վարկի տրամադրման դիմաց առկա են այլ վճարներ՝

- Վարկային հայտի ուսումնասիրման միանվագ վճար – 2,000 ՀՀ դրամ,

* Անուիտետային եղանակով վարկի մարման դեպքում անհրաժեշտ է որոշել վարկի մարմանն ուղղված ամսական վճարի գումարը, հետևյալ բանաձևով՝

$$K = A \times \frac{(1+R)^P \times R}{(1+R)^P - 1}$$

Որտեղ՝

- **K** – ամսական վճար,
- **A** – վարկի սկզբնական գումար,
- **R** – տոկոսագումար (նշվում է ամսական տոկոսադրույքը, օրինակ՝ $24\% / 12 = 2\%$),
- **P** – վարկի մարման ժամկետ (ամիսներով),

Յուրաքանչյուր ամիս վարկի մարման գծով ամսական վճարը կկազմի՝

$$500,000 \times \frac{(1+0.02)^{24} \times 0.02}{(1+0.02)^{24} - 1} = 26,436$$

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկելու համար որպես K_1 լրացվում է վարկային հայտի ուսումնասիրման 2,000 ՀՀ դրամ միանվագ վճարը ($K_1 = 2,000$):

Այսպիսով՝ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կհաշվարկվի հետևյալ կերպ՝

$$500,000 = \frac{2,000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{26,436}{(1+i)^{\frac{30}{365}}} + \frac{26,436}{(1+i)^{\frac{61}{365}}} + \dots + \frac{26,436}{(1+i)^{\frac{730}{365}}}$$

$$i = 0.2740 \times 100 = 27.40\%$$

Բանկի կողմից առաջարկվող վերոհիշյալ պայմաններով վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի 27.40 %: